ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» սեպտեմբերի 2024թ. № 888

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՄԵՋ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍԱՐԳԻՍ ՀՐԱՆՏԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ, ԼԻԼԻԹ ՕՆԻԿԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ, ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԵՎ ԷԴԳԱՐ ՍԱՐԳՍԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, հաշվի առնելով, որ Սարգիս Հրանտի Մինասյանին (1/2), Լիլիթ Օնիկի Աբգարյանին (1/6), Թամարա Սարգսի Մինասյանին (1/6) և Էդգար Սարգսի Մինասյանին (1/6) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրում գտնվող, 06-098-0077-0028 կադաստրային ծածկագրով 0,22 հեկտար մակերեսով հողամասի վրա 2020 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան նկուղի, 1-ին հարկի, բաց պատշգամբի, 2-րդ հարկի, ավտոտնակի և պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25062024-06-0076 վկայականը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2023DLQQWX, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Թամարա Սարգսի Մինասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սարգիս Հրանտի Մինասյանին (ծնված՝ 06.10.1961թ.), Լիլիթ Օնիկի Աբգարյանին (04.02.1967թ.), Թամարա Սարգսի Մինասյանին (ծնված՝ 22.11.1986թ.) և Էդգար Սարգսի Մինասյանին (ծնված՝ 05.10.1989թ.) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ 06-098-0077-0028 կադաստրային ծածկագրով 0,22 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 30,90 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով նկուղը, 122,70 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան (1-ին հարկ), 16,70 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը, 126,10 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան (1-ին հարկ), 73,40 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը և 26,30 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սարգիս Հրանտի Մինասյանի, Լիլիթ Օնիկի Աբգարյանի, Թամարա Սարգսի Մինասյանի և Էդգար Սարգսի Մինասյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի ճշգրտված հատակագիծը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Սարգիս Հրանտի Մինասյանին, Լիլիթ Օնիկի Աբգարյանին, Թամարա Սարգսի Մինասյանին և Էդգար Սարգսի Մինասյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 198 573,41 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ _____Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 4
ք.Սպիտակ